

## Մ Ա Մ Օ — Զ Ի Ն

(Քրդելէնից)

Հայ և բուրդ բանաստեղծ՝ երգիչներ անխտիր պատմում են, թէ հին ժամանակներում՝ գարնան գեղածիծաղ մի առաւօտ, երեք լուսաւոր հրեշտակներ կաբաւների կերպարանը մտած, թուզում էին երկնքի երեսով և նրանց կը լուցոցներից որոշ կերպով կարելի էր հասկանալ հետևեալ պարզ ու սրտառուչ խնդրուածքը.

Արարշագործ Տէր, հրաւիրիր երկնքին,  
Թև մի կաբաւ վերուստ ձօնել մեր խմբին.

Թուզով ենք երեք, խաթուն Զին էլ մեզ հետ, չորս  
կը լինենք միասին:

Գահ<sup>1)</sup> որ միասին չորս եղան,  
Եղան չորս կաբաւ, թռան,  
Այս չորս կաբաւներ թռան,  
Երկրի չորս կուռ ճախր եկան,  
Մուղուր Զէմին բաղաքում  
Մամօի բարձի մօտ իջան:

Նրանցից մէկը սողոսկելով Մամօի ծոց մտաւ և վերշինս զարմանալով հարցրեց.

— Ո՞վ ես դու, ի՞նչ արարած և ո՞ր բաղաքից.

— Ես Զինէն եմ, Զինէն.

Աղջիկն եմ Միր<sup>2)</sup> Սէւտինին,

1) Երբ, ժամանակ, բրդ. — գաւ: 2) Էմիր:

Մէկ ու Ճար բնյր Միր Զէյտինին,  
Բնակում եմ Զզիր Բօհտանի:  
— Թէ Զզիրի բաղաքիցն ես,  
Քաղքումդ բանի՝ «մինարայ» ունես:  
— Հօրըս բաղաքումը կայ  
Միայն վեց հատ մինարայ:  
— Խսկ դու ովլ ես, ո՞ր բաղքից:  
— Ես Ալանի<sup>1)</sup> եմ Մամէն,  
Ալիաշայի եմ որդին,  
Քաղքս է Մուղուր Զէմին<sup>2)</sup>:  
— Քաղաքումդ բանի՝ կան մինարէներ:  
— Մեր քաղքումը կան 366 մինարէներ:

Զինէն իրան յաղթուած համարելով՝ ասաց.

— Մամէ՛, մենք հասանք մեր սուրբ մուրատին,  
Արի՛, մենք փոխենք մատնիք մեր մատին:  
Եւ երբոր նրանք փոխեցին իրանց մատնիներ,  
Ակերի վրոյ կար գրած երկուսի անունն էլ:

Գիշերը կէս էր եղել, Մամէն տեղն ու տեղը բնած  
մնաց. Հրեշտակները Զինէին գողացան նրա կշաից: Երբ  
քնաթաթախ աչքերը բաց արեց, —և ննջարանի չորս կողմը  
շուռ ածեց, ապշելով տեսաւ, ոչ թէ Զինէին, այլ մի ան-  
սովոր լուս:

— Խնչիցն է յառաջացել այդ շողը, — հարցրեց նա  
ինքն իրան, մոռանալով մատանիի դէպքը: Աչքով հետեւելով  
շողի ընթացքին, աջ ձեռքի ճկոյթ մատի վրայ ադուցած  
տեսաւ մի թանկագին ոսկի մատանի, ադամանդեայ ակի վրայ  
շըցանակաձև գրած.

«Ես Զինէն եմ, Զինէն.

Աշջիկն եմ Միր Սէւտինին,

Մէկ ու Ճար բնյր Միր Զէյտինին,

Քաղքս է Զզիր Բօհտանի»:

Լուսարացին կանուխ առաւօտ Մամէն խորտակուած

1) Ալան կամ Ալեան բրդական մի աշիրաթ է բուրդս-  
տանում: 2) Այս բաղաքի աւերակների վրայ շինուած գիւղը  
Եփրաս գետի աջ ափին է, զուտ բրդաբնակ, 250 տուն բնա-  
կիչներով և այժմ անուանում է «Էսկիֆ»:

սրաով հօր դիւանը մտաւ իւր գիշերային զգեստով։ Երկու սև հաստ գանգուրները ականջների ետևից կուրծքի վրայ մինչև գօտեկապը բաշարած, անխնամ, առանց սանտրելու։ մոռացաւ մինչև անգամ երեսը լուանալ։ Եթէ սև խոպոպները նրան չմատնէին, եթէ զուտ սպիտակ մէտարսէ շորերով, ճերմակ ցանցահիւս մետարսեայ արախչիով, գիշեր ժամանակ մի անծանօթի դէմ ելնէր, կարելի էր եղակացնել, թէ մի գունափշմիկա<sup>1)</sup> է դա գերեզմաններից նոր կենդանացած իւր սպիտակ պատանքներով։ Նա երբէք այդ օրը չէր կարող հետաքրքրուիլ իւր արդ ու զարդով։ Մի աւելի բարձր միտք նրան կաշկանդել էր. այդ դրութիւնով նա ներկայացաւ դիւանին կից ախոռի երկու ծառայողներին։

Ծիսնելովի թանձր սև ծուխը հանդարա օդի մէջ օղակ օղակ ծառանալով՝ բարձրացել էր. թանկագին բազմոցները աջ և ձախ երկու հանդիպակաց կողմերի փսիսաթների վրայ պարզուել էին, թողնելով բաց գեանի մի լոյն միջարածին դիւանի ծառայողների համար. ծիրաննեղյն փետրալից բարձերը կարգով շարուած էին. դիւանի կահաւորութիւնը կատարեալ էր։

Հօր ծիսամորճը պատրաստել, տեղն ու տեղը դրել էր. Բօրն էլ այդ օրուայ արտասովոր նախաճաշից, ձիապանների հարուստ փայփայանքներից շատ գոհ էր երկում. հրհում էր, առջևի ոաները փոփոխակի մսուրի պատուանդանին դրմբացնելով։

— Աստուած Խէր տայ. այսօր մեր տէրը շատ ախուր, մտազբազ է երկում. ի՞նչ կայ. — Հարցնում էր ծերունի ախոռապետը միւս երիտասարդ ձիապանին. — Նա երբէք առանց այս սիրելի ճմանէկին<sup>2)</sup> նժոյդը փայփայելու, համ-

<sup>1)</sup> Հայեր և բրդեր անխտիր վկայում են թէ բրդաց չարագործ մարդիկ, մանաւանդ որսորդ ննջեցեալներ ուրուականների նման կենդանանում են մարմով, պատանքներով գալիս իրանց տանեցիներին վախեցնելու։ շատ անգամ կենդանիների կերպարանքով են երկում. դրան վերջ տալու համար մի հայի ձեռքով վիզը կտրել կտան մի բահով կամ այլ երկաթէ գործիքով։ <sup>2)</sup> Մանէկի, զվի, սէկլաւի նժոյդ. Ների տեսակների անուններն են. առաջինն ամենաընտիրն էր

բուրելու, մի օր դիւանը չէր մտել:

— Ես էլ հէնց այդ եմ մտածում, — նկատեց երիտասարդ Աստաբ. — բարեւ էլ չտուեց մեզ:

Մամէն չկարողացաւ իրեն պահել, սիրու դողդողում էր, աչքերը մվագնում էին:

— Ծերունի Դրէ՛հ, — ասաց նա ախոռապետին, որը զբաղուած էր Բօրը ջրելով. — Ես այսօր ինձ քիչ վատ եմ զգում, գնում եմ շորերս հագնելու, դուռ ու փողանը<sup>1)</sup> խնամքով մաքրեցէք: Երբ հայրս կդայ և ինձ կըհարցնէ, կասէք որ Մամէն թեթև գլխացաւ ունի, շուտով կը վերադառնայ:

Մամէն դիւանից դուրս եկաւ պյլ ևս չվերադառնալու պայմանով. իւր բնազդումներն էլ այդ էին դուշակել տալիս: Հէնց գորա համար էլ երբ աշխատում էր հայրենական օջախից ինչպէս մի բանտից դուրս պրծնել, ոտքերը հակառակում էին, աչքերը լայն բաց արած ամեն առարկայի վրայ որոշորոշ նայում էր առանց մի բան հասկանալու:

Ըստ մեծ գժուարութեամբ գլոր-մոլոր հազիւ կարողացաւ հասնել իւր առանձնասենեակը. Հոգեկան ծանր տենդային հիւանդութիւնն արդէն նրան անդգայ էր արել համարեայ. յաճախ զառանցանքի մէջ կրկնում էր, Զինէ, Զինէ... Ոսկի մատանին՝ այդ անշունչ առարկան էր միայն որ արձագանք էր տալիս նրան՝ Զինէ, Զինէ...

Ալփաշան, այդ միակ որդու ապաբազդ ծերունի հայրը, հաստ գաւագանի վրայ յենուած՝ տնքանքալով դիւանը մըտաւ. Մամէն չկար այնտեղ, տեղեկանալով Մամէին պատահածը՝ փութաց մտնել նորա սենեակը. վերջինս աչքի առջև դրած սիրելի մատանին մի և նոյն խելացնոր դրութեան մէջ էր:

— Մամէ՛, Մամէ՛, Աստուած Խէր տայ, ի՞նչ է պատահել որդեակ:

— Գիտէ Աստուած, հայր իմ, ծանր հիւանդ եմ, — անակընկալ թնցումով ասաց որդին, ձանաչելով հօր ձայնը:

— Ես քեզ մատաղ, իմ մէկիկ զաւակ, որ աեղդ է ցաւում. այդ հիւանդութիւնն իմ վրայ դայ, որդեակ:

<sup>1)</sup> նեղ Փողոց, սրահ:

— Հիւանդութիւնը Աստծուց է, հայրիկ. մտի՛ր դիւանը, չլիսի թէ վազիր վուզարէք<sup>1)</sup>), աղալարներ պյանեղ գան և բո բացակայութիւնը զանաղան թիւրիմացութիւնների առիթ այս:

Հայրը որդու մատների հետ անընդհատ խաղալը նկատելով՝ հետաքրքրուեցաւ և երբ աչքը հանդիպեց մատանուն.

— Տուր, — ասաց որդուն, — տեսնեմ ի՞նչ մատանի է այդ. ի՞նչ է գրուած վրան:

Եւ իւլելով որդու մատից, բարձրաձայն կարդաց.

— Ես Զինէն եմ, Զինէն,

Աղջիկն եմ Միր Սէւտինին,

Մէկ ու ճար քոյր Միր Զէյտինին,

Քաղաքս է Զդիր Բօհանի:

— Հասկացայ, Մամէ, դու սրտի հիւանդութիւն ունիս և ոչ գլխացաւ, այս բոպէիս Լօխմանից աւելի հմուտ մի բժիշկ կը ճարեմ քեզ համար, — ասաց հայրը և մատանին որդուն յանձնելով դուրս եկաւ:

Բարձրագույն հրաման հանեց, որ իւր գլխաւոր բաղում գուսաններ, երգիչներ, փողհարներ, լարախաղացներ հաւաքուին, փողհարեն, թմրկահարեն, որբան աղջիկներ կան Մուղուր Զէմինում ամենին այդտեղ հաւաքեն, որ Մամէն իւր նշանածին նրանց մէջ ճանաչէ:

Խեղճ Մամէ, մատանու վրայ կար գրած Զդիրու բաղաք, իսկ ինքը ծերունի հօր չ'վշտացնելու համար պարտաւոր էր որոնել Մուղուր Զէմինում, որտեղից որտեղ:

Կղակը կրծքի վրայ պինդ փակցրած գժուածի պէս աննպատակ շատ շուռ եկաւ, բայց Զինէն շատ ու շատ հեռու էր իւր քաղաքից:

Երբ անցնում էր վազիրի աղջկայ առջևից առանց երեսին նայելու՝ վերջինս երգեց.

— Ո՛վ Մամէ, դու բազէի ունես սուր աչքեր Տես, ի՞նչի համար են այս գուսաններ.

2Ես բունչնիլ<sup>2)</sup> վազիրների աղջիկներից

մէկիս ձեռք բռնել:

1) Կախարաբներ; 2) Զիջանել:

Տեղապահի աղջիկ.

— Ով Մամե՛ դու յարգելի ամենիս,  
Մուշտակդ էր բաշես վեր քո աչքերի,  
Մէկ մի դէս նայիր գեղուհիներիս  
Զեռք պարզիր. դու առ մեղնից մէկ կաշառք  
Մէկն էլ բեղ համար նշան հաճելի:

Մամէ՛.

— Ալանացս ազգում թէ կան գեղանիներ,  
Հեռո՞ւ ինձնիցը տանեն նրանց մեծ գետեր.  
Նա, որին անթարթ որոնում են իմ աչքեր,  
ծիրանի են շորեր:

Աղջիկն է Միր Սեւահին,  
Մէկ ու ճար բոյր Միր Զէյտինին.  
Բնակում է Ֆղիր Բօհանի.  
Անո՞ւն էք հարցնում. — Խաթուն Զին:

Զիապանին.

— Դուրս բաշեցէք իմ հաւատարիմ ընկեր նժոյդը՝ Բօր.  
Գոհար ծոպերով ոսկեծեծ թամբը հագցրէք իրան շոր,  
Ֆղիրն եմ գնում ես, ո՛հ Ճամբայ անդարձ, հեռաւոր:

Ալփաշան.

— Եղուկ ինձ ծերիս, վայ ինձ չուառիս.  
Հարցրի թափառաշրջիկներից,  
Հարցրի տարիքաւոր ծերերից,  
Բայց Ֆղիրի անուն ոչ ոք չ'առւեց:

Ալանի Մամեն երբոր Բօրը դուրս հանեց,  
Ոտքն ասպանդակում «Մարգարէ» ձայնեց,  
Աշխաժ երիվար շղթայուած ոտքերով ոնց արծիւ  
Թոռաւ անցկացրեց նրան պատնէշի վրայից:

Քօր.

— Իսկի չես հարցնի Մամե՛, երեք է թէ չորս օր.  
Ինչ կապանք ունի ոտքին քո սիրուն Բօր.  
Կապանքները <sup>1)</sup> ևրուել են հասել մինչ ոսկոր,  
Ընկերդ՝ անքում է ինչպէս մարդ վերաւոր:  
Թոռաւ ցածր իջաւ ուշիմ նժոյդից,

<sup>1)</sup> Զիու ոտքերի անուրը կամ շղթան, որը Մամօն սիրուց բորբոքուած մոռացել էր բակել:

Քաշեց «Զիլֆիսար» Մամեն պատենից,  
Երկաթ շղթայի հաստ, հաստ օղակներ  
Հարուածից փըշքեց հենց մի անգամից:

**Բօր.** — Անհոգ կաց Մամէ՛, իմ մասին անհոգ,  
Աէրբերիս կապի՞ր մէկ մէկ թաշկինակ,

Թամբն ինձնից վեր առ, շիմ իմ թևերս մինչև իմդաւակ:

**Մամէն.** — Անհատնումճամբորդութիւնից ձանձրացած՝ սսաց.  
Քանդիր ով Աստուած արա բըրիշակ,

Այս ամուշ անսպատ անմարդարնակ,

Ուր չկայ հովիւ, նախորդ և մշակ...

Օտար պանդուխտ եմ ես ու մոլորուած,

Զդիտեմ Զզիր-Բօհան ինչ մէկ դարի տակ:

Երբոր սրարշաւ վազցրեց դարագլեին Բօր,

Լսեց չէ երգում այլ ոռնում է մի բանորու:

— Մշակ. կերդուես ինձ կենդանին Աստուած,

Որ ես բեղ ուղղեմ ճշմարիտ մի հարց,

Օտար եմ պանդուխտ կորցրել եմ ճամբաս,

Զզիր ո՞ր կողմն է, ասա բացարձակ:

**Մշակ.** — Երդվում եմ յանուն Աստուած կենդանի  
Այս իսկ է լուծք 1) Զզիր-Բօհանի:

Մամօն բաշխեց նրան բուռ մի կլոբակ ոսկի,

**Բօր.** — Աղջիկ մի կայ մօս աղբիւրին,

Մի ողջուներ ան գեղեցկին:

Մամէն գնաց մօս աղբիւրին,

«Ողջոյն» ասաց այն գեղեցկին:

**Աղջիկ** — Եւ բեղ ողջոյն, վեր աչքերիս,

Գաս դու Մամէ, իմ ցանկալիս:

Մամէն մեծ զարմանքով լսելով աղջկանից իւր անունը,  
և նրա անունը հարցրեց փոխադաբար: Երբ վերջինս  
«Զինէ» անունն արտասանեց, երիտասարդական տաք արիւ-  
նը բոպէտական ցնցումով եռ եկաւ իւր սրտում, աչքերը  
միժանեցին, սիրոյ սաստիկ բարախումից յառաջացած անա-  
կընկալ յեղափոխութիւնը այնքան յուզեց նրան, այնքան  
կորցրեց նրա սառնասրտութիւնը, որ միջոց չունեցաւ երա-  
զում աեսած նազելի արարածի և սրա մէջ համեմատու-

1) Հումայ:

թիւն գնել, չ'մտածեց սիրոյ միակ գրաւականի աղաման-  
դեայ մատանին մտիկ տալու:

Նա արդէն պատրաստ էր միանգամից թռչել ինչպէս  
մի թիթեռնիկ և այդ նազելի օրիորդին գրկախառնելու—  
որը նրա կարծեբով Միր Սէւտինի դուստր Զինէն էր—եթէ  
ուշիմ բանիմաց ծովային կենդանին՝ «Մանէքի» նժոյգների  
ծաղիկ հօրը՝ նրան չգտուշացնէր. այսպէս:

Ի՞նչ կ'անես, տնաբանդ, Խորհեր մինչ յատակ,  
Այդ Զին՝ աղջիկն է Բաքօին անարդ.

Շատապենք մենք հասնել Զղերի քաղաք,  
Զղերն եմ ասում հասկացիր շիտակ,

Արև որ թեքուի մտնի սարատակ,  
Եղբայրն եղբօր կըմոռնայ, էճն իւր աւանակ:

Հիասթափուելով Մամէն աշխատեց ուղղել իւր մեծ  
սխալը, բայց շատ ուշ, եղածն եղած էր. յարուցանելով  
կասկած իւր Մամէ լինելու մասին, և յետոյ մերժելով այդ  
օրիորդի ձեռքը անյաջող ճամբորդութեան առաջին աստիճանին  
վրայ ուր դրեց, արկածալից կեանքին սև կծիկ բոնեց իւր  
ձեռքում: Անսարդ Բաքօի աղջիկը վշտացած իւր այդ օրուայ  
անյաջող փորձից, կուժը թեկից կախ արած նրանցից յա-  
ռաջեց, արտասուախառն աշբերով տուն մտաւ և պատահած  
դէպքը մանրամասն պատմեց իւր հօրը:

Սա շտապով վազեց ճամբորդի առաջը կարելու. ծանր  
երդում անելով նախնեաց գլխով, որ եթէ վերջինս չ'զիջանի  
իւր տանը պատսպարուելու, պէտք է սև օձի պէս թոյնը  
բերանում նրա ետևից ման գայ և թոյլ չ'տայ նրան իւր  
մուրատին հասնելու:—Այդ դիտաւորութիւնով չար ճամբու  
վրայ կանգնեց:

Երբ ճանապարհորդը ինչպէս հեռաւոր աշխարհից եկող  
մարդ սրան ողունելով հիւրանցի մասին հարցումներ ա-  
րաւ՝ նրանից հետևեալ պատասխան ընդունեց.

—Եթէ շատ բանգէտ իմաստուն, հնարագէտ մարդ կը  
փնտուէք՝ ուղիղ գնացէք Բաքըրի տուն:

Եթէ պատւով մեծ, բարձով մեծ, բաջ, պատկառելի  
անձնաւորութիւն էր որոնում. կը տեսնէք հանդիպակաց  
բարձր բերդ ու ամրոց, —այնտեղ է ապրում Միր Սէւտինի  
որդի Միր Զէյտինը, կարող էր նրա մօտ իջևանել:

Խսկ եթէ ձեզ հարկաւոր է մի այնպիսի մարդ, որը միանգամայն անկեղծ բարեկամ, եղբայր, անձնուելու հիւրասէր լինի. Հարցրէք Միրի հօր եղբօր որդի խարա Թաժտախնի տունը:

Ո՞ւմ հարկաւոր չէր մի այդպիսի բարեկամ, որ Մամէին հարկաւոր չ' լինէր, ուստի և սա ընտրեց վերջինիս: —

Զերմ շնորհակալութիւն յայտնելով այդ բարեացակամ ուղեցոյցին, դիմեց դէպի Թաժտախնի քօշը: Եթէ մէկը միւսի ետևից վխացող ջորիների ու էշերի կարաւաններից լըսուող աղմկալի ձայները և նրանց վզերից կախուած բաղմաթիւ մանր և խոշոր զանգակների զընդզընդոցները չընլացնէին մեր ճամբորդին՝ նա կլսէր Բաքոյի հետևեալ սպառնալիքները:

— Դու չես քունջնիլ իմ տանս հիւրասիրուելու հա՛, գնա, եթէ ես թոյլ տամ, որ դու հասնես քո մուրատին՝ թող հայրերի ոսկորները գերեզմաններից իրանց գլուխները բարձրացնեն, ինձ դատապարտող լինին, թող երկինքն ու գետին ինձ վրայ փուլ գան:

Այդպէս էր մրթմրթում աչքերը յառած ձիաւորի ետևից խորտակուած մնուի յօյսերով Բաքոն: Հիւրասէր Թաժտախն ձիու ոտքերի դըմբդըմբոցները լսելով՝ առաջ եկաւ քօշի դունից և պատկառելի հիւրի թեկը մտաւ և առաջնորդեց նրան հիւրերին յատկացրած մեծ Դիւանը:

Խնչպէս նախածանօթ սրատակից բարեկամներ, երկուսը միասին խօսեցան ագահ-ագահ, երեք օր, երեք գիշեր, մոռանալով մինչև անդամ մի նախաձաշ աներ:

Փէրի խանուումը զայրանալով մտաւ Դիւանը:

— Տնաքանդ, ասաց իւր մարդուն. — այսօր երեք օր ու գիշեր է, որ ես ճաշը պատրաստում եմ ու թափում, ուղում ես մեր արքսյապատիւ հիւրին սովամահ աներ:

— Կնիկ — պատասխանեց Թաժտախն, առանց պարտ ու պատշաճ յարդական անուն մը տալու նրան, գիտէ տէր, կարծում եմ դեռ այն ժամ այն րոպէն է՝ երբ մեր հիւրը ինձ մօտ իջաւ:

Նրանք ճաշի սեղանից դեռ նոր էին բաշուել, դեռ ու լեզի սուրճի գաւաթները ճընկճընկում էին: Միր Զէրտինի հրաւիրակները եկան Թաժտախնի և իւր յարդելի հիւ-

րի ետևից, այդ նորեկները ստոր դասակարգի մարդիկ էին. գոռող Միրը դրանով ուղղում էր իւր ներդործող գերի մասին կանխապէս բացադրութիւն տալ օտարականին: Այդ դիւրազգաց, զգօն Թաժտինի նկատողութիւնից չէր կարող սպրդել, Միրի այդ լուելեայն ստորացնող ակնարկներին չէր կարող հանդուրժել և իւր ու հիւրի պատիւը միանգամայն արածաւորուած չ'համարել:

Թէև Փէրի խանումը եղած դէպքի մասին ամենից շատ վշտացովներից էր, և իւր անբաւականութիւնը շուտով էր յայտնել իրանից փոքր՝ եղբօր Միր Զէյտինին, այնուամենայնիւ Թաժտին այդ էլ բաւական չհամարելով նախ քան Տիւրին թոյլ տալու գնալ Միրի ապարանք՝ ինքը յառաջեց: Աշ ձեռքով սպիտակ փղոսկրեայ խանջարը բոնած, երեսների գոյնը սրտի սաստիկ զայրութից գեղին մանածի էր փոխուել: Ներքին շուրջը ատամերով շարունակ կրծութելով, ներս մտաւ առանց պարտ ու պաշշաճ յարդական ողջըն տալու Միրին:

— Ով իմ Միր, մեր հիւրը այն կարգի մարդկանցից չէ, որոնց անշան ծառաններով կարելի է հրաւիրել. կարող եմ հաւասարի լինել: Թէ երբ նա ձեզ մօտ մտնէ՝ դուք կը պարտաւորիք խոնարհաբար ոտքի կանգնել, ասաց Թաժտին:

**Միրը ցնցուեցաւ:**

— Ձէ, չէ Թաժտին, շատ էր սխալում, Թըլֆու Մատէքի քեռին Ալի Շարի Միրի տոքեւ տեղից չէ շարժուել, բնչպէս թոյլ էր տալիս ձեզ կարծելու, որ ձեր Միրը պյան յիմար, այնքան աղջյամիտ է, որ այդ անծանօթ օտարականի, այդ շորէ-նրձկի առջեւ ոտքի կը կանգնի:

Միրի այս վերջին վիրաւորական ակնարկութիւնն աւելի անտանելի էր: — Եթէ Փէրիի նախազգուշացնող միջոցները չ'լինէին, եթէ վերջինս նախապատրաստուած չ'լինէր վերջապէս ակամայ տեղի տալու, Թաժտինի այդ օրուայ արտասանած բառերը այնքան կծու և վիրաւորական էին, որ արինով միայն կարելի էր վերջ տալ այդ վէճին: Բայց Միրը աւելի մեծ թշնամիների հետ գործ ունէր: Ալի Շարի Միր... այդ էր իւր ամենօրեայ մտածութեան առարկան: Հենց դրա համար էլ չէր կարող Թաժտինի պէս մի կորիւնիւնչպէս սովորաբար գործ էր ածում—ձեռքից բաց թողնել:

— Հա՛, հա՛, Թամատին ասաց Միրը. — Թող բռ Խօսքը լինի. Ես այն պղտիկ լակոտների (բեռորդիներ) սիրուն սիրում եմ բեզ իմ եղար պէս. ձեր հայրը Միր Շեմտինը, իմ հօր մեծ եղայրն էր, թէև սա Արաբների դէմ տարած մէկ քանի յաղթութիւններով Միրութիւնը նրանից առել էր, բայց դարձեալ յարգում էր եղարը, նրա առջև ուղի էր կանգնում. Հենց դորա համար էլ պատուաւոր կերպով ձեր հիւրին այստեղ կը հրաւիրեմ. իսկ ինչ կը վերաբերի այն գովեստներին, որ դուք շուշլում էք այդ անծանօթին, ես ինձ դարձեալ թոյլ չեմ տալիս ոչ թէ ձեզ չ'հաւատալու, այլ նրա առջև ուղի կանգնելու:

Նրկու եղարօր որդիներ գեռ ծանր պարտաճանաչութեան բարակ ինդիրների մէջ էին խորասուղուել, երբ Միրի թոյլութեամբ հրաւիրակների առաջնորդութեամբ Մամէն ներս մտաւ և ողջունեց բազմականներին:

Միրի աչքը հիւրի պատկառելի, բարեձև, պահաւան հասակին, նրա հմայող աչքերին որ պատահեց՝ երեխայի նման ակամայ վեր թուաւ:

Թամատին ծանօթ էր սրա կամակոր, հաստակող, խօսքապաշտ բնաւորութեան, ծոցից թաշկինակը հանելով թագուն նրա տակը պարզեց, հիւրի ներկայութեամբ նրան չըկոտրելու համար:

Դա մի հաստատուն փաստ էր Միրի ցոյց տուած խունարհութեան, դրանից աւելին արիւնհեղութեան ասպարէզ կը բանար երկու արիւնակիցների միջև: Հացի և երկար խօսակցութեան միևնույն դէպքը, որպէս էր Թամատինի դիւանում, տեղի ունեցաւ և այստեղ:

Հետաքրքիր ամրոխը խոննուած էր Միրի դիւանի շուրջը: Թամատինը նկատեց:

— Ո՞վ իմ Միր, ժողովուրդը ուղի տակ գնաց. Հրաման արա, որ մեր քօշքի տանիքի վրայ գորգեր, սփոռցներ պարզեն, յարգելի հիւրը այնտեղ պէտք է բարձրանայ իրան ցոյց տալու հետաքրքիր ամրոխին:

Ամեն բան պատրաստ էր. Հասարակութիւնը ուրախ արամադրութեամբ նրան դիմաւորեց իւր «դանկ-բէժ» երգիչներով:

Զինը՝ որին երազում միևնույն դէպքն էր պատահել,

ինչ որ Մամեին, սրա մատանին իւր մատին ունէր, պատկերը ծանօթ էր իրան, սրա սիրոյ կրակով տապկուելով օրեցօր հալումաշ էր լինում, հետաքրքրուեց գէթ մի անգամ հեռուից նորեկի պատկերը տեսնել:

— Գնամ, տեսնեմ, կարելի է թէ իմ տեսած երիտասարդը լինի, ամբոխի բերնիցը ջուր է վազում նրա գեղեցկութեան վրայ հիացած, «Հայտէ», մի փորձ էլ ես անեմ — ասում էր իւր աղախինների ամենից մտերմին:

Հատ մօտից տեսնելու համար մի տոիթ էր հարկաւոր, և այդ հեռու չէր, մուրատատուր աղբիւրը թաժախինի քօշքի առջև էր:

Քառասուն աղախինների շալակը դրած հօր տան պըզնձեղէն ամանները, այդ աղբիւրի վրայ լուանալու պարուակով մօտեցաւ, տեսաւ և ճանաչեց, նա էր:

— Ես ձեզ չեմ ասել, նազէ, որ այս մատանին երազով ստացել եմ Ալփաշայի որդի Մամեից. չեմ ասել նաև որ սիրում եմ այդ երիտասարդին: Յիշում էր թէ որքան աղմուկ ու շփոթ բարձրացաւ, քանի քանի բարդական կըտրիժներ հեղձամահ եղան իմ եղբօր ձեռքով, որոնց վրայ կասկածում էին, թէ ինձ հետ վատ յարաբերութիւն ունին: Քանի պահանաներ կեղծ մատանիներ շինելով ուղում էին տիրանալ իմ սրտին: Եւ երբ իրանց ձեռնարկութիւնների մէջ յուսախար էին լինում, քանի իներն իրանց սրերով մեռնում էին: Այդ ամենը որի՞ երեսից — այն քսու, կամակոր հօր քսու օրիորդի՝ Զինէի երեսից, որը, ով գիտէ, ինչ չարածնի հնարքներով. ձեղանից մէկից հասկացել էր մատանիի գաղանիքը, հասկացրել էր իւր հօրը, որը և հասցրել էր իմ եղբօր ականջին: Ահա նոյն ինքն Մամօն է թաժախինի տանիքի վրայ կանգնած. ես նրան ճանաչեցի, պէտք է մի խաղով իմ ներկայութիւնս յայտնեմ նրան:

Աղախիններ. — Զինէ, ի՞նչ կանես, տնաշէն, չես տեսնում երկու տագիերիդ, քո նշանած Աֆան էլ նրանց կշտին կանգնած, ամօթ է:

— Զէ, իմ սիրելի նաժիշտաներ, դուք սխալում էք, միթէ ձեր կրծքի տակ դուք սիրտ չ'ունիք. այդ զգայուն սիրտը աչք չունի որ ամաչէ, երես չունի որ խպնի, ունի

բնատուր ճարտար լեզու և այդ լեզուն է, որ իմ մէջ թըրթում է. թողէք ուրեմն որ երգեմ.

— Ծարէշար Են կանգնել մէկ քօշքի տանքին.

Աֆան, Ճական մէկն էլ և Միր Թաժտին.

Երեք հարազատ եղբայր անմեկին:

Գլուխ մատադ կանեմ նրա ոտի տակին

Սրտի սիրական Մամօ-Ալանին:

**Մամէն տեսնելով Զինէին:**

Եկաւ մի հարուստ մեծ վաճառտական,

Գնում առաջը կտրեմ և կաշառք առնեմ կամ  
գրաւական:

**Աֆան վշտանալով Մամէից:**

Եղբայր, տեսածդ չէ այն վաճառտական,

Որից՝ մեղնից մէկնումէկը վստահի

Պահանջել մի կաշառք կամ գրաւական.

Դա՞ Քղիրի Միրի բոյրն է գեղուհի:

**Մամէն. Տեսայ ես անցաւ աղջիկ զուարթադէմ**

այդ իմ Զինէն էր.

Սաթեսյ գլանիկ ծածկել են շատ սեղմ

Մեղրածօր շրթներ.

Եկէք կակիծներս, Խամրել իմ արև

Թափել իմ աչքեր:

**Թաժտին:**

Բաւէ եղբայրներ, մեր յարկի վրայ անէք հարայ հրոց։  
Երդւում եմ երկնային զուարթութեան տիրոջ անունով։  
Մամօ-Զինին միայն տեսայ ես հա գերի կաշկանդուած  
սիրոյ ցանցերից:

**Մամէի և Աֆանի միջև ծագած բանակոիւը Զինէի մասին ծանր կերպարանք կըստանար, եթէ Թաժտինի յետադայ խելացի, Խաղաղասէր առաջարկութիւնը նրան վերջ չ'տար։**  
«Եղբայր Մամէ, յարգելով Տիրասիրութեան հնաւանդ սրբազնն սովորութիւններն, ընդունել եմ քեզ մեր յարկի տակ, ինչպէս երեքիս մեծ եղբայր։ Դու և Աֆան չ'պէտքէ միմեանց վշտացնէք. կոյ աւելի դիւրին մի միջոց, այդ այն է, որ մենք այս աւելից հանդիսատես կը լինենք, դու միայնակ գնա՞ աղբիւրի մօտ, եթէ Զինէից մի նշան բերեցիր, արդէն նա բոնը կը լինի և վէճն ինքնիրան կը դա-

դարի. հակառակ պարագայում, էլի մեր հիւր, էլի մեր եղբայր:  
Մամէն. — Դէ՛չ, եղբայրներ, դուրս բաշեցէք աշխաժ  
նժողովը Բօր,

Գոհար ծոպերով ոսկեծեն թամբը հաղցրէք իրան շոր,  
Աղբիւր կը գնամ ես, ո՛չ, ճամբայ մօտիկ բաղդաւոր. —

Մամէն գնաց մօտ աղբիւրին,

և զջուն՝ ասաց այդ գեղեցկին,

Զին. — Եւ քեզ ողջոյն վեր աչքերիս

Գաս դու, Մամէդ իմ ընարելիս:

Մամէն. — Շարէշար են կանգնել երեք եղբայրներ,

Երեքի հայրն է խօջա Շէմտին Միր,

Ուզում են տեսնել քեզնից մի կաշառք և կամ

նշաններ:

Զինէն Մամօի դէմ համարձակուեց

Ռազ վռազ քօֆին գլխից ցածր բերեց

Ոսկու շարքերից ոսկի մ'իւր ձեռքով

Նրան ընծայեց:

Կրկին ձեռք տարաւ իւր ոսկու շարքին,

Նրանից մի ոսկի խեց թանկագին,

Պինդ սեղմեց Ալան Մամէի ձեռքին,

Ասաց քեզ մատաղ, այս մէկն ա՛ռ կաշառք

կամ գրաւական,

Մէկ այլն էլ ինձնից քեզ սիրոյ նշան.

Թէ չ'հաւատան:

Թագտին ու եղբայրներ Աֆան, Ճական,

Ասա՛, այս մէկն է Բօհուանայ Զզիրի

Հարկը հօթը տարուան:

Մամէն ջուխս ոսկին մատներում սեղմեց,

Վազէվազ եկաւ նրանց առջև դրեց:

Ասաց չէ՞ք հաւատալ սրանցից մեծը

Հարկն է եօթ տարուան Զզիրի քաղբին,

Այդ՝ Զին ինձ ասեց:

Մամէի և Աֆանի ծանր վէճը հեշտութիւնով վերջացաւ  
ի նպաստ առաջնի: Նրանք սիրով հաշտուեցան, որին իրրւ ան-  
կեղծ գրաւական ընդունուեցաւ Մամէի սոյն առաջադրութիւնը  
«Պապենական սրբազան սովորութիւնը յարգելու հա-  
մար արիւնոտենք մեր ճկուտ մատերը և փոխադարձաբար

Խմենք միմանց արինից, որ հաւատանք թէ այսուհետեւ  
չորս եղբայրներ ենք»։

Թաժաին ասաց չորս եղբայրներ ենք,  
Երեքս սպիտակ նժոյգներ ունինք,

Պէտք է ման գանք աշխարհ ծխով ու մխով  
Մամօին, Զինին մուրատի հասցնենք։

Աֆան ասաց. — չորս եղբայրներ ենք.

Երեքս էլ շիկամորթ նժոյգներ ունենք.

Պէտք է ման գանք շատ աեղ սրով ու հրով  
Մամօին իրան գեղանուն յանձնենք։

Ճական ասաց. — չորս եղբայրներ ենք.

Երեքս թխամորթ նժոյգներ ունենք.

Հարբած մարդու պէս աշխարհներ շուռ գանք

Մինչև գեղանի Զինին՝ Մամօին տանք։

Բաքօի խորհրդով հետևեալ օրը Միր Զէյտին հրա-  
ման հանեց բարձր ազնուականներին, որ պատրաստուին իւր  
և Մամզի հետ որսի գնալու. Զին ինչևեցէ կերպով վերա-  
հասու լինելով Բաքօի Խարդաւանանքին, կանխապէս լուր էր  
զրկել Մամօին, խորհուրդ տալով, որ սա իրան հիւանդ  
ձևացներով որսորդութիւնից ետ կենայ. — Այդպէս էլ եղաւե  
Խարա Թաժաինին հասկանալի էր այդ միտքը։

Միրին Մամզի դէմ չ'զայրացնելու համար ինքը հե-  
ծաւ իւր ձեռնեզբօր ձին և ընկերացաւ որսկանների կազմ ու  
պատրաստ խմբին, որ բաղաքից դուրս էր եկել։

Բաքօի Շաբարտը Մամէն էր. երբ սրա բացակայութիւնը  
տեսաւ, իսկոյն նրա մէջ ծնաւ մի չար միտք... թաքուն  
խանջարով ձիու մէջիկալով կարեց, որով և առիթ գտաւ  
յետ մալ լրտեսելու երկու սիրելիներին, որոնք ձիաւորների  
մեկնելուց անմիջապէս յետոյ երկու սպիտակ կանացի ամառ-  
նային շորերով զգեստաւորուած մտան ցանկապատ այդին։

Նրան էլ այդ էր հարկաւոր։ Որսկանների ետևից սը-  
րնթաց հասաւ, առաջարկելով Միրին աւելի մերձաւոր որ-  
սատեղի, այն է ցանկապատ պայտում տեսած այծեամների մի  
զյսդ ուլեր։ Միրը հաւատաց Բաքօի առաջարկութեան, կամ  
եթէ չհաւատաց էլ, հասկացաւ նրա չար դիտաւորութիւնը,  
ուստի և խմբով վերադարձաւ։

Աշնան պայծառ անամբ երկնքի տակ, հաղարաւոր բա-

ըիեներով օժառուած անմահական բուրաստանի, այն է ցան։ կապատ այդիի մէջ երկու ուխտեալ դաշնակիցներ երկար ժամանակ սիրոյ հրով տաշորուում էին, նրանց պասբած շրթունքների միաւորութեան և գրկախառնութեան ժամանակ, այդ հմայիչ ու մոգական տպաւորութեան տակ, — ուր լուսմ է մահկանացուի լեզուն, լուս են ծառերի և ըշշոց, սոսափիւններ. բնութիւնն համակ հմայուած է այդ բաղզր և անրացատրելի տեսարանով, — խօսում էր միայն սիրտը. ամեն բան հասկանում և հասկացնում։

Ուշիմ և անձնաղո՞ս Թաժտին, որ այդ բոու, անարդ Բաքօի քայլերին հետևելով՝ լաւ էր հասկացել նրա բանսարկու դիտաւորութիւնը, այժմ էլ վերահասու լինելով նրա խարդաւանանքին, աչքով նշան արաւ իւր հաւատարիմ խորհրդապահ Միր Զէյտինի չառւշ Բատինին, որ ձիարշաւի պատրուակով արշաւեց դէպի այդին։

Հասաւ շտապով բաջ չառւշ Բատին,

Մամէն թեքուել էր Զինէի սրտին,

Ասաց, տօ մարդ, տնաւեր, տնաբանդ,

Չե՞ս տեսնում, ահա որսկանների գունդ։

### Մամէն.

Բատին, դաղտնապահ բժիշկ հրեշտակ,

Զինէի և իմ մեղք դիր քո ոտիդ տակ։

### Բատին.

Շտապիր հերիք զրուցես երկար,

Մինչև Միր չխրէ մէջքիս չորս խանջար,

Երբէք չեմ ասիլ նրան ես արդար։ —

Երբոր Զինը հօր չառւշին ճանաչեց,

Ճաց թռաւ ցանկապատից, չաղատուեց,

Վազեց և Մամէի մուշտակով փաթաթուեց։

Երբոր Միրը այդին մտնել շտապեց

և Ալանի քաջ Մամէին բարեւ ասեց

Սա երբէք Միրի առջև չկանգնեց։

Բաքօն ասաց ով Մամէ,

Ո՞վ էր տեսել, երբ ներս մտնէր մարդու տէր,

Ծառային բարեւ տար և բարեւ էլ ընդունէր.

Այլ հասակող ինքնահաւան ծառայ մարդ,

Խսկի տեղից չշարժուէր։

## Մամէն.

Կերդնում քո գլուխ ով Բաքըր.

Շատ հիւանդ եմ, ցաւեր ունիմ և վշտեր.

Պանտուխտ մարդ եմ, գլորմոլոր հազիւ հազ

Գտայ պյս աեղեր:

Հաւատակ ինձ, ոյժ չունէի, որ կանգնէի ռաերիս.

Միրի բարեւ ընդունում եմ վեր գլխիս ու աչքերիս:

Բաքըր.

Մամէ, Մամէ, ես չեմ խաբւում գիտէ Տէր,

Այն՝ որի հետ գու կապել ես անքակ սէր.

Աւ արաբ մի է, ճակտին ունի տգեղ ծիներ ու խալեր,

ես աչքովս եմ տեսել տասը շալակ կանգրի տերեներ

Շալակելով Զզիր Բոհատանայ սարերից ցած է իջել:

Մամէն.

Կերդնում քո գլուխ, պյտ էլ չեղաւ, ով Բաքըր,

Այն՝ որի հետ ես ուխտել եմ անքակ սէր,

Նուրբ և գվազ<sup>1)</sup> թշեր ունի.

Նրա տունն է բերդ ու ամրոց պյս վերին,

Թէ չես հաւատալ ես բեղ կասեմ իւր անունն է խա-

թուն Զին:

Միր Զէյտին.

Բոնեցէք, կապեցէք, պյտ վատարանց մարդուն,

Տարէք ձգեցէք զնդան սառնատուն:

Թաժտին ասաց՝ ով իմ Միր,

Բաքըրը շուն է, Խոռովար և կռուասէր,

Բանսարկու է և երեսպաշտ, պոչով ունի նա ստեր:

Մեր եղբայրը շատ հիւանդ է, գիտակցութիւնը կորցրել,

Նա՝ որի հետ Մամէն կապել է անսենգ սէր,

Այս անարդ մարդու աղջիկն է, Բաքօնւանին,

Ամեն օր էլ պյս կողմիցն է անցկենում և իւր անու-

նըն էլ է Զին:

Բաքըրը ասաց ով իմ Միր.

Թաժտին կանչում է ինձ մարդ անարդ կամ Բաքօ աւան<sup>2)</sup>,

1) կարմիր: 2) Աւան բառի նշանակութիւնը չ'կրցանը  
հասկնալ, երկի անարդ, որովհետեւ շատ երգիչներ գործեն  
ածում ճնալէթի» որ անարդ է նշանակում:

Ըան պէս կոռւարար, ստախօս,—դաւաճան,  
Դէ դու նայիր տես թէ ահա այն ի՞նչ բան  
Է փաթաթել կանաչ մուշտակով Մամէ-Ալան:  
Թաժտին.

Ինչ որ Մամէն կանաչ մուշտակումն է ծրարել,

Խըր ոսկեհուռ ասպաղէն զարդն է և ծոպեր:

Որոնք նա միշտ իւր հետը ման է ածել:—

Ծփաց սև թաժտին ընտիր տղամարդ,

Մէկ ձեռքում բաժակ միւսումն էլ գաւաթ,

Ասաց, ա՛ն եղբայր, քոռնան իմ աչքեր,

Ի՞նչ դառը վիճակի ես դու մանուել,

Երբ որ ջուխտակ ու սև սև խոպոպներ

Դուրս էին պրծել մուշտակի տակից

Զոյդ մի Ըամ<sup>1)</sup> ոսկի ամեն մի հիւսքից,

Կանչեց, տօ Աֆան, քոռանան քո աչքեր,

Հիւանդ Մամէն, ուշքն է կորցրել,

Տեղ պատրաստեցէք, շարեցէք բարձեր,

Ծտապով ընթացէք, բռնէք իւր թևեր,

Պէտք է տուն գնամ, պարզեմ տեղ բարձեր:

—Բորբոքուած գլխով ուժդին նա վազեց,

Մաղ վուազ դէպի ներբնատուն դիմեց:

—Խաթուն Փէրին երբ նրան տեսաւ գոչեց,

Ասաց.—Փէրին բեզ մատաղ առիւծ անվեհեր,

Ինձ հետ ի՞նչ ունես, ի՞նչ է պատահել:

—Ժամ է շարժուելու, խաթուն շտապիր,

Թլլիք ու Մատէրին<sup>2)</sup> ու չորս հատ նժոյդ միայն ա-

ղատիր,

Արակ պէտք է աամ բօշքս ու ապրանքս և բոլոր աներ,

Եղբայր Մամէն քուրիկ Զինէն

Խիստ ծանր տագնապի մէջ են:

Փէրին.

Այդպէս լինի, իմ առիւծ, հազար հեղ պյտպէս,

Անձնազոհութիւնդ կը գնեմ գլխիս.

Եթէ ոսկէփայլ թլլիք ու Մատէրին,

<sup>1)</sup> Դամասկոսի; <sup>2)</sup> Երեխաների անուններ:

Զորս հատ սպիտակ նժոյդ էլ միասին պյուես<sup>1)</sup>

Ապագայում բարի անուն կը կանգնես:

Հառւշ Բատին, որ պահապան հրեշտակի նման Մամօի-  
ջինի սնարի վերև կանգնած հսկում էր, աղ ձեռքով պինդ  
սեղմած հնդիկ սրի երենոսեայ երախակալը և մաքում դը-  
րած լինելով փողոտել նրան՝ ով առաջին անգամ կը յան-  
դդնէր ձեռք երկարել հետ Մամօի մուշտակին, երբ տեսաւ  
անձնազոհ Թաժտինի քօշքից բարձրացող բոցերի տատան-  
ւող ալիբները կապոյտ մթնոլորդի մէջ ինչպէս կատաղի վի-  
շտպ, աղաղակեց բարձրաձայն:

— Անկան ծառի փայտն է փայտ սկագոյն,

Իւր բոցերի ցոլքեր գորշ երկնքի կայծերի հետ են մրցում:

Այրուում են չորս հատ ընտիր նժոյգներ,

Ոսկեփայլ Թըլֆ ու Մատէք գեղանի Միր Զէյտինի  
բեռորդիներ:

Սնկան ծառի փայտն է փայտ կարմրագոյն,

Բոցերի ցոլքեր բարձր երկնքի կայծերի հետ են մրցում:

Այրուում են, այրուում ոսկեփայլ Թըլֆ ու Մատէք,

Զօրել Միր Զէյտինի բեռորդիներ ջուլտակ:

Ամբոխը ցրուեցաւ վագեց գէպի կրակ,

Մամօ-Զին այգում մացին միայնակ,

### Մամօն.

Դու էլ իմ սրտի բուրաստան Զինէ,

Բաքօն իւր ջանից մող ևէր չ'տեսնէ:

Վազիր շատապով մանել ապարանք,

Ես էլ կը փութամ դէպ անշէջ կրակ:

Գնաց նա ուղիղ դէպ հրդեհ, կրակ,

Ասաց. — կրակ, մեր մէջ Աստուծոյ «Ծարեաթ»,

Ի՞նչ ես պահանջում իմ ցաւած սրտից. —

Իրան վերևեց կրակի մէջ ձգեց,

Բոցն իսկոյն և եթ տեղն ու տեղ մարեց:

Մամէն երկու մատղաշ գրկանոցների օրօրոցներ, Աֆան

<sup>1)</sup> Քրտերի մէջ անձնազոհութեան մի օրինակ է, որ հիւրի անարդանքը ծածկելու համար՝ ինքը իւր բնակարա-  
նը և մինչև անգամ իւր զաւակները կրակի է մատանում:

Ճականն էլ չորս սպիտակ նժոյգները անարատ պրծուցին։ Անձնուեր Խարա Թաժտին իւր կուրծքը դարձրել էր իւր ձեռնեղմօր համար ամուր պարիսպ, աւան Բաքօի թունաւոր նետերը նրա վրայ չէին կարող ազդել, բայց սա էլ շուտով յուսահատողներից չ'էր. շատ մտածեց, շատ չափեց ու ձեւեց, գտաւ մի հնարք։ Մի օր տուն մտնելիս, տեսաւ իւր աղջիկ Զինէին աղիողորմ արտասուբների մէջ թրջուած, Մամէի վերայ ունեցած տոփական սիրոյ սաստկութիւնից։

«Մի լար», ասաց, իմ աղջիկս, եթէ եօթ տարի անընդհատ աշխատելով՝ չկարողացայ Մամէին Միրի քրոջ գրկից յափշտակել, չեմ էլ թողնի նրանց երբէք իրանց մուրատին հասնել։ Քանի այս չար սատանան ասպարեզումն է, մենք չենք կարող մեր ձեռնարկութիւնների մէջ յաջողուել, այս րոպէիս քո հայրը մի նոր հնարք դտաւ, մի կծիկ էլ խառնեց։

— Հրաշալի՛ հնարք. — Գաղանի լուր ուղարկեցի Ալի՛ Շարի Միրին թէ, Միր Զէյտին իւր երկու փեսաների հետքեղ վրայ արշաւելու է պատրաստում։

— Դրանից մեզ ի՞նչ շահ։

— Ի՞նչպէս թէ ինչ շահ, որդի, Ալի Շարի Միրը, որ արդէն մի առիթ էր որոնում, ոտքի կը կանգնի, մեզ կը յաջողուի սյդ չար սատանին՝ Թաժտինին իւր եղբայրների հետ ասպարեզից հեռացնել, ա՛և, Թաժտինի գրադերա։ Այս ժամանակ ամէն բան մեզ համար հեշտ կը լինի։

Այդ չար խորհուրդը յլացուեցաւ չորս բարե պատերից ներս բառ և աղջկայ միջւ։

Հրդեհի գէպքից յետոյ անցան մի բանի շաբաթներ, մէկ օր Միրը սաստիկ զայրացած կանչեց Բաքօին։

— Տօ՛, նենգաւոր, ստորաբարշ շուն այս րոպէիս պատգամ եմ ստացել Ալի Շարի Միրից, որ մեզանից պատերազմ է պահանջում։

Ցեսնենք ո՞վ կը գնայ այդ անընկճելի թշնամու հետ կռուելու։

— Ցնաշէն, պատասխանում է գաւաճան մարդը — ես բեղ շատ սրտոտ մարդ եմ ճանաչում. մի՞թէ այդքան թեթև գէպքերից կարելի է ընկճուի ձեզ պէս հոչակաւոր մի Միր, այն էլ Զզիր Բօհտանայ Միր Զէյտինը։ Ես իմ առիւծասիրտ Թաժտինին էլ եմ ճանաչում, ճշմարիտն ասած, նա

մեր աշիրաթի փառքն է։ Ամեն տեսակ առաքինութիւններով օժառուած վեհանձն մարդ է, անսացեք ձեր Բաբըրի խորհրդին, էգուց մի թօպ ձերմակ կտաւ իրբու երկուախն պատանք և մեր թրերը կը տանենք և կը գնենք նրա ոտքերի տակ, կը հաշտուենք։ Նրան կուզարկենք այդ բո անյաղթելի ասած մարդու դէմպատերազմ, ամէն բան իւր սովորական կարգը կը գտնի։ Այդպիսի խոնարհութիւն մեր կողմէց վեհանձնութիւն է, տղամարդութիւն է, դրանով մենք կ'ազատուինք օտարի միջամառութիւնից, Թամաքին էլ մերն է, օտար չէ։—

Միրը կամայ թէ ակամայ հնազանդեցաւ այդ խորհրդին։ Հաշտութեան պայմանները կնքուած էին։ Քամաժամին իւր եղայլներով պարտաւոր էր գնալ հասարակց թշնամու դէմպատերազմ, որի փոխարէն երբ յաղթութեամբ տուն վերադառնար՝ կ'ստանար Միր Զէյտինից վարձաարութիւն Մամօ-Զինի հարսանիքի թղյլտւութիւն։

Թէև Թամէտին յաճախ պնդում էր, թէ առանց Բաբօին ոչ մի բայլ չէ անում, բայց այս ցածրաշ մարդը օձի նման գալարուելով նրա ոտքերի տակ, ազի լեղի արտասուքով պաշտում էր, որ խնայեն իւր մանր՞երեխաններին, երդուելով միանդամայն այն երկու Միրերի գլխով, որ Մամէի մասին ոչ մի բան չ'խօսի։

Եօթը երկար տարիներ պատերազմը շարունակուեց Արեան դաշտի վրայ շատ հսկաներ ընկան։ Մի օր Բաբօն Միր Զէյտինի դիւանը մտնելու ժամանակ երբ նրան առանձին գտաւ, շատ ճարտար ձևերով Մամէի անունը յիշեցրեց, հսկացնել ուզելով թէ ինքը սրտանց ցանկանում է, որ Մամէն հրաւիրուի դիւանում։

Թղյլտւութիւն ստանալով Միրեց անձամբ հրաւիրեց նրան։

Եօթ տարի... բիչ ժամանակ չէր այդ. Զինէի և Մամէի կողմց Բաբօի հետ ունեցած թշնամական յարաբերութիւնը մոռացութեան էր արուած։ Եօթը տարի էր ինչ Մամէն հնաւանդ սովորութեամբ աներոջ շինութեան կշտից չէր անցկացել, խպնում էր մինչև անգամ նրա երեսով նայելու Այդ օրուան ուրախ լուրի իւր վրայ թողած չափազանց լաւ տպաւորութիւնը այնքան րոպէական ցնցումներ

յառաջ բերին նրա հոգու մէջ, որ երբէք էլ չ'կարողացաւ ժամանակ վաստակել խորհելու թէ իւր համար մի թաքուն դաւաճանութիւն կայ սարբուած, թէ շատ ճարպիկ որսորդի ցանցի մէջ է գլորուել:

Մտաւ Միրի մօտ, խոնարհաբար ողջունեց, ամօթից ու պատկառանքից ոտքի վրայ սպասեց մինչև թոյլտութիւն ստացաւ Բաբօի բարեխօսութեամբ ծնկաչոք նստելու:

Մամօն այդ օրը իրան խօսակցի հետ հաւասար չէր զգում. եօթ տարի բաժանուելով հայրենի օջախից միայն մի անհատի գեր էր խաղում, այն էլ մեղ պէս ստորացեալ դասակարգի մահկանացուի գեր:

Այդպէս է լինում ամեն միր, թոռըն, բէկ, «էլ աղամի», որ ո՞վ գիտէ ի՞նչ ձախորդ հանգամանքների շնորհիւ կտրում է իւր ազգից, աշերաթից, էլից և բնակութիւն է հաստատում մի այլ՝ իրան հաւասար, անդամստոր աստիճանի մարդու սեպհական հողի վրայ: «Քարն իւր տեղն է ծանրա, ասում է առածը: Այդպէս էր և Մամօն, չ՞նպյած որ Ալիքաշան աստիճանով և բաղաբական ուժով, կարողութիւնով իրանից շատ բարձր էր: Մուղուր Զէմին ուր, Զզիր Բօհաին ուր» — թեր ևս ո՞վ գիտէ — ինչպէս կարծում էր Միրը — Մամօն անյայտ ծնողաց զաւակ է, որ իւր բարեձև բալրական հասակի և տղայ մարդուն արժանավոյել հաստատուն կազմուածքի շնորհիւ բաղրաւորուել է փեսայ դառնալ մի Միրի, որպիսին է ինքը Զէյաին:

Եւ մի՞թէ փեսայութիւնը թեթև լուծ էր դրել նրա վզին. սյդ հանգամանքում ոչ թէ հաւասար բարեկամ. եղաբայր, այլ ամօթխած որդի էր, որ չպէտք է շեղուեր հայրենական սովորութիւններից: Այդպէս էր մտածում Մամօն, երբ ծնկաչոք նստաւ աներոջ հանդէպ: Այդ՝ գիտէր և Միրը, գիտէր և Բաբօն, որ փեսայի և աներոջ միջև տիրող լուութիւնը ընդհատելու համար առաջարկեց «սանթրաճ»<sup>1)</sup> խաղալ. բայց ինչի՞ն վրայ, այս էր խնդիրը:

— Ես սիրում եմ — շտապեց ասել Բաբօն, — որ աներն ու փեսան մի «գլխառուաղ»<sup>2)</sup> խաղան: Դիւական բրբիջներով

<sup>1)</sup> Սատրինճ, շախմատ: <sup>2)</sup> Սովորութիւն կայ Տաճկաստանում որ նարդ կամ թուղթ կամ որևէից խաղանելու ժա-

իւր դէմբին այնքան անկեղծ ձև տալով և մի աչքը ճառած Մամօի երեսով քածիկ-փծիկ<sup>1)</sup> լինում, որով հասկացնել էր ուղում թէ յաջողութիւն է ցանկանում նրան:

Ի՞նչ կը լինէր սրա դլխուազը.—մի Զինէ. այդ Խօ իւր իրաւունքն էր:

—Հայտէ Խաղանք, —ասաց Միրը:

—Հայտէ Խաղանք դլխուազ, տաս հեղ դլխուազ, —Համաձայնուեց և Մամօն, ինքն իրան այս հաշիւը տալով. կը Խաղանք դլխուազ, սա էլ մի անմեղ դրաղում է: Եթէ ես յաղթեցի կը պահանջեմ Զինէին, այդ Խօ իմ իրաւունքն է. միայն շատ կը ծիծաղենք, փորեսց կլինենք: Հակառակ դէպբում ի՞նչ կը կորցնեմ, —մի չոր գլուխ: Ի՞նչ, միթէ իմ աներս այնքան վատ կը դանուի, որ իւր օջախում այդ արկածալից գլուխը պահանջէ ինձանից: Հայտէ Խաղանք, —վերջնականապէս վճռեց, մաքում կրկնելով քրդական առածը «գուշիւը առանց պատուհասի չի մանում գերեզման»: Կամ «կալուածքների գովելին - ջրաղաց»: «Գործիքներից էլ - սմբակատաշ»: «Երանի ինձ ու այն քաջ մարդկանց, որոնք չեն մտածում ոչ ձախ, ոչ էլ աջ»:

Մամէն վեց անգամ Միրից տարաւ: Դաւաճան օձը սողոսկելով դուրս ելաւ, վաղեց դէպի տուն: —Զինէ, Զինէ, աւէտչէքս տուր, բռ հարսանիքն մնաց կէս ժամ: Թէ չես հաւատում, պահունի շորերդ հագիր, դիմացի լուսամուսը նստելով բռ եղքօր և նշանածի մրցութեան հանդիսատես եղիր: Միամիտ աղջկայ հետաբրեկիր հարցասիրութեան գոհացում տալու համար մանրամասն պատմեց «գլխուազի» դէպբը:

Զինէն քուրդ աղնուականուհուն վայել ամեն պաճուճանքներով զգեստաւորուած դիւանի հանդիպակաց լուսամուտի մօս նստեց շատ ուրախ տրամադրութեան տակ: Դաւդիր մարդը իւր այդ նորահնար դիւական խաղից գոչ՝ վերադարձաւ դիւան, երբ

---

մանակ չեն նշանակում առարկան, որի վրայ կը Խաղան, յաղթողը պէտք է պահանջէ իւր սրաի ուղածը, թէկուզ յաղթուողի կնիկը լինի, ուստի և «դլխուազ» սրաի ցանկացած է նշանակում: <sup>1)</sup> Քծնել:

Մամէին՝ թիկունքն էր դէպի Զին,

Միրին էլ կուրծքն էր դէպի Զին:

Բաքօն. — Ես ունեմ երկու տղամարդ որդիներ,

Առիւծների պէս մէկ մէկի են փակուել,

Պէտք է Մամէի դիրքը փոխել:

Երկուսի դիրքը փոփոխելէ յետոյ Խօսք ուղղելով Բաքօն ասաց Մամէին.

Տնաբանդ, ի՞նչ այնքան պշլել ես հետև ակներին,

Դարձուր տեսութիւնդ լուսամուտի շողերին:

Երբոք Մամէն նայեց լուսամուտի շողերին.

Փիզը<sup>1)</sup> խաղաց հետևակների<sup>2)</sup> փոխարէն:

— Գիտէ տէր, Մամէ — ասաց նրան Միր. —

Աերջապէս դու ինձանից յաղթուեցիր:

Շատապիր, գնա շուտով իմ «շարթ»<sup>3)</sup> բեր:

Մամէն ասաց, — ով իմ Միր

Ես վեց անգամ բեզ յաղթեցի,

Այդ հաշիւն իսկի չարեցի: —

Միր նրան ասաց — ով Մամէ Ալան,

— Ես բեզ յաղթեցի տասն երկու անգամ,

Վեց ձեռք բաշխեցի քո վեցի փոխան,

Քեզնից պահանջում եմ միւս վեցը միայն:

Մամէին՝ ձեռքից բռնած զնդան ձգեցին,

Քառասուն մարդով խոր փոսի բերնին

Քար մի շուր տուին:

Զինէն տեսնելով որ իւր ճիշն ու աղաղակը, աղի լեղի

արտասուբները անզօր եղան ազդել յամառ եղբօր քարա-

ցած սրտին, դարձաւ իւր սենեակը և երգեց սրտամորմոք:

— Սիրտ իմ, սիրտ, ել բաժանուիր իմ կրծքից,

Կամ համաձայնուեցէք տեսնել Մամէին,

Մէկը թող սպասէ միւսն էլ մի լուր բերէ նրանից:

Ինն օր սգաց ու կոծեց, ոսկեթել վարսերը փետեց —

Կ'մ անվզը<sup>4)</sup> և պառեկ Մամէ, ուր ես — կանչեց ու

լաց — Մամէն չկար. իւր ապարանքը դրսից և ներսից սկ

<sup>1) 2)</sup> Փիզը հետևակ «սաթրաճի» խաղաքարեր են:

<sup>3)</sup> Շարթ. դաշն, պայման, ուխտ. այստեղ գրակ է նշանակում, գրաւ: <sup>4)</sup> Անպաշտպան:

գունով ներկեց։ Գաղանի բանքանձիներ գտաւ։ առանձնաւ սենեակից մինչև Մամեկի զնդան մի ստորերկրեայ ճանապարհ բաց արեց և գտաւ իւր սիրելի Մամեկն։

Բանաստեղծական սիրոյ ցանցերից կաշկանդուած, երկու ուխտեալ դաշնակիցներ սրտամորմոք գրկախառնուեցին և պյդպէս երկար մացին ինքնամոռացութեան մէջ։

Անցան էլի մի բանի օրեր, շաբաթներ. Բաքսն տուն վերադառնալիս,

—Իմ նազելի Զինէ, ասաց, պյօր կանուխ արշալուսին Մամօի և Զինի աստղերին մտիկ եմ տուել, շատ են մօտիկացել իրար. այն երբեմ տխուը ու մոայլու գոյնը փոխուել է մի շատ պայծառ պլազուկի։ Երկէի մի նորութիւն կայ. սթէուից<sup>1)</sup> ցածր բեր իմ համայիլս, Նրա մէջ պլուած երկար հմայքի թուղթ մի ունեմ, տեսնենք ի՞նչ է ցոյց տալիս։

Շատ պշշաց, շատ թալեց ու բռնեց. նա յանկարծ բացականչելով ասաց.

—Ո՞չ, այն չարաձճի աղջիկը ստորերկրեայ նրբանցբով հասել է իւր սիրականին. Թող հողեր ու փոշիներ ծածկեն Բաքօի գլուխը, որ նրանց արժանաւոր դաս չտայ։ Մալեց հմայքների գիրքը և ղետեղեց ոչխարի մորթից պատրաստած ոսկենկար բանուածքներով բառակուսի կաշուէ պահարանի մէջ. երեք անգամ ջերմեռանդութեամբ համբուրեց, յետոյ ճակտին դնելով աղջկան յանձնեց ու գնաց իւր համախոհ Միր Զէյտինի տուն։

—Ի՞նչ էք խօսում, Բաքըր. պյդքան էլ յանդգնութիւն. գնանք, տեսնենք, պյդ իմ բանն է, ասում էր Միրը, լսելով Բաքօից ստորեկրեայ անցքի մասին։

—Վստահացնում եմ ձեզ, իմ Միր, պյդպէս է, ճիշդ պյդպէս, գնանք տեսնենք։

Նրանք երկուսը միասին մտան Զինէի ապարանքը. ինչպէս տեղին ծանօթ, ամենից առաջնայեցին ծիրանի գոյն գոյն փետրալից բարձերի տակը։

—Զինէ, Զինէ, հարցը Միրը, — այս ի՞նչ ծակ է։

<sup>1)</sup> Սթէու, դարակ, տախտակի շէնք, որի վրայ դարսում են անկողիններ. Երկէի բաստեռն բառի արմատ։

Զուր էին ողողում հետ աղջկայ աղիողորմ արտասու-  
բի կտթիները այդ անողոք քարասիրտ եղբօր հանարի գեղ-  
մաները՝<sup>1)</sup>:

Այդպիսի բոպէում մարդկային գութի և կարեկցութեան  
զգացումները անխոցելի ապառաժ էին դառնում, սրանում:  
Այդ հանգամանքում սա իրան շատ դժբաղդ, շատ անպա-  
տիւ եղած էր համարում. ի՞նչպէս իւր գլուխը բարձրաց-  
նէր Աշիրաթի մէջ, որ մի օտար անյայտ ծնողքի զաւակ  
յանդգնում է սրբապղծել Միրի ընտանեկան նուիրական  
յարկը: Նա պատրաստ էր կարմիր լայնավիզ գիզմայի եր-  
կաթեայ պայտերից գուրս ցցուած, դանակի նման երկու  
սուր ժանիքներով առանց այդ էլ խորտակուած գլուխը  
յատակին գամել. Նա պատրաստ էր փղոսկրեայ սպիտակ  
խանջարի երկու թղանոց շիլֆը միսել ոտքերի տակ գալա-  
րուող և եղած Զինէի՝ վշտերից չորացած մարմնի մէջ, եթէ  
մի աներևոյթ ձեռք չկաշկանդէր նրան:

— Թամահին, Աֆան, Շական, սյդ անպարտելի քաջերը  
դեռ ողջ են. Նրանք վրէժինդիր կը լինին ինձ: Զինէի՝ մեծ  
եղբօր ձեռնաբոյրն է, կնոջն էլ բոյրը: Մեր տոհմի Աշիրաթն  
էլ զայրանալով նրանց կողմ կը թեքուի, այդ հանգաման-  
քում ի՞նչ կը լինի իմ դրութիւնը. — կամ մահ, կամ մմալ  
իրը Մամէ:

Ճիշդ է, դրանք Մամէին էլ ձեռնեղբայր են շինել,  
նրա արիւնի հետ միաւորուել, բայց Աշիրաթի աչքում  
այլ է Զին, այլ է Մամօ: Այդ աննամուս աղջիկը իւր ճը-  
կուն, հմայող լեզուի շնորհիւ, իւր սիրաշահող ձեերով այն-  
քան բարձր դիրք է բռնել, որ կարծես ինձ հաւասար պա-  
տիւ ունի «Էլի»<sup>2)</sup> մէջ, իմ բացակայութեան ժամանակ ինձ-  
պէս կարող է կառավարել ոչ միայն մի Զգիր, այլ և մի  
ամբողջ աշիրաթ: Խսկ մեր շրջանի բարձր ազնուականներից  
սկսած մինչև հովիւը, նախրորդը, հորթարածը, գառնարա-  
ծը, ձիարածը, ուղարապանը, պարտիզպանը, բոլորն էլ, ո-  
րոնք մի անգամ այդ բածի հետ շփուել են, մի անգամ նրա  
ձեռքի կերակուրը կերել՝ այնքան են սիրում ու հա-  
մակրում նրան, որ դժուար թէ ինձանից երես չդարձնեն:

1) Կարմրավիզ կօշիկ: 2) Ցեղ:

Զինէին սպանելը այնքան հեշտ է, ինչպէս մի ծտի գլուխ մարմից բաժանելը. հապա գալիք դժուարութիւննե՞րը:

— Աչ ոչ, չեմ սպանի, թող ապրի նա, բայց ոչ Մամէի համար: Ես սրտանց ատում եմ այդ երիտասարդին: ոչ, նրան էլ չեմ սպանի, բայց մի այնպիսի դաս կը տամ, որ յաւիտեան անմոռանալի՛ մայ: Թող գնայ համոզուի, որ Միք Զէյտինը աննամուս մարդ չէ եղել թամաժինի պէս, որ թոյլ տայ իրան օտար տղամարդու այդպիսի տմարդի վարմունքը անպատիժ թողնել: Նրան կը ձգեմ նախապատմական դարերից մացած կոփածոյ բարէ մեծ զնդանը, որ ովք գիտէ քանի հազարաւոր Մամէներ է կլանել: Կը սպասեմ այնքան մինչև թամաժինի մատին մի որոշ լուր կառնեմ, այնուհետև իմ բանը կլնի այդ:

Այդ երկար մտածութեան անձնատուր եղած՝ նրա ականջները երբէք էլ չլսեցին հէգ աղջկայ հունգո՞ւո, հունգո՞ւո հէկեկոցները, յորդառատ արտասուբի կաթիլները չընդարմացրին երբէք գաղանաբարոյ եղբօր սիրոյ նետերից անխոցելի սիրտը, որ այդ բոպէին մի մարմացած վրէժեանդրութիւն էր պատուի համար:

Մինչ անարդ Բաքօն ճարպիկ որսկանի շան պէս սառը երկրեայ անցքից դուրս հանեց իւր որսը, հիւծուած՝, մաշուած, գունած, աչքերը խորն ընկած: Մամէն իւր սիրեցեալ Զինէի բօշքի տախտի վրայ դուրս եկաւ ոչ այն առաջին հմայող կերպարանքով, երբ առաջին անգամ Զզիրի երկիրը ոտք դրեց, Բօրի մէջքից ցածր իջաւ և երբ ամբողջ Զզիրը նրան տեսնելու էր եկել թամաժինի բօշքի շուշը:

Աւաշը, անողոք էր նրա դէմ ճակատագիրը: Նա ուրատանց պազատում էր մի անգամ ընդ միշտ թօթափել կեանքի այդ անտանելի բեռը: Բայց նրան դեռ ևս տանջանքներ էին հարկաւոր, բնութիւն համակ զինուած էր նրա դէմ: Բաքօն, այդ անգութ ճակատագրի հատու ժանիքը, դեռ իւր ագահ կրքերին յագուրդ չէր տուել: Նախնեաց գլխով արած ուխտին նա չէր կարող դաւաճանել, դեռ իւր ծրագիրը լիովին չէր գործադրել: Պէտք էր հալածել, անքուն հալածել:

— Քարէ զնդա՞ն, — այդ եղաւ նրա առաջարկութիւնը Միրին մեկուսացած առանձին անկիւնում: Երբ վերջինս էլ

իւր մէջ արդէն այդ եղրակացութեան էր եկել։ Ծանր շըղ-  
թաներով կապոտած ոտքերը, ձեռքերը և վզից կախ արած  
անուրը ինչպէս մի անշունչ առարկայ գլորեցին բարէ զըն-  
դանը, բառասուն մարդկանցով մի բար էլ հորի բերնին  
դրին։

Մարդկային բոլոր միջոցներից ձեռընթափ եղած ողորմելի  
Զինէն, գաղտնի սուրհանդակ ուղարկեց Թաժախնին։

Մի բանի օրից յետոյ Խարա Թաժախնի և եղբայրների  
սպառնալիքները ծանր տագնապի մէջ դրին Միրին, որ շտա-  
պեց կոկին դիմել Բաքօի Խորհրդին։

Ռոպէն վճռողական էր. Թաժախնը կարող էր գալ,  
բռնի քանդել Մամօի շղթաները, Հարսանիք կը սկսէր. Բա-  
քօի եօթ տարուայ Հանդոցները կարձակուէին, այն ահա-  
գին շնոր, որ եօթ տարուայ մէջ կառուցել էր, Թաժախ-  
նի մի «զիլֆի» Խարի» Հարուածով կը չքանար երազի նման։  
Մամէին սպառնելու գաղափարին էլ Միրը կը Հակառակէր,  
վախենալով Թաժախնի սպառնալիքներից։ Ի՞նչ պէտք էր ա-  
նել. չքանայի՞ն իւր ծրագիրները, իւր ուխտը։

Երկու անբաժան լծակիցների կեանքի բանալին իւր  
ձեռքի մէջ տեսնելով Բաքօն, ասաց.

— Ազատենք զնդանից Մամէին, Թաժախնը կը գայ ար-  
ձակուած կը տեսնի և բարկութիւնը կը մեղմանայ։ Ի՞նչ  
արած, պէտք է ճակատագրին Հնազանդել։ Մամօն և Զի-  
նը օրինաւոր ամուսիններ կլինին, Հարսանիքը ամեն բան  
մոռացնել կը տայ Թաժախնին. պրծաւ գնաց։ —

— Ազատենք, բացագանցեց Միրը, ոչ սակաւ զարմա-  
նալով այդ անսովոր դերի մասին, որը ստանձնել էր այդ  
րոպէին Բաքօն՝ Հակառակ իւր եօթ տարուայ բըռ-  
նած ընթացքին։

— Այո՛, ազատենք, զարմանալու ի՞նչ կայ. «այն ձեռ-  
քը, որ չէ կարուում» պէտք է պաչել, գլամի վրայ զնել» —  
ապահովացրեց նրան Բաքօն։

Բայց մենք, որ ծանօթ ենք նրա դերի, նրա մի ան-  
գամ արած ուխտի հետ, չպէտք է զարմանանք, որ հենց  
այդ ազատութեան մէջ էր նրա տարած յաղթութիւնը։ Նրա  
սրտի մթին խորերում թագնուած դաւաճանութեանը չկա-  
րողացան թափանցել ոչ Միր Զէյտինը, ոչ Թիթեռնիկի

պէս անմեղ ու անարատ Զինը և ոչ էլ կարող է անցնել մեղ նման մահկանացուների մաքից։ Մամէի ազատութիւնն ու Բաբօի յաղթանակը՝ շատ հակասող բաներ են։ Հարցը նըրանում է թէ ով պէտք է աւետէր Զինէին այդ սրտաձըմիկ ուրախ լուրը։

—Դարձեալ Բաբօն։

Ըատ խնդրեց, շատ պաղատեց որ խաթուն Զինի թանհագին բաշխիշին արժանանալու համար Միրը իրան անէ այդ շնորհը։

—Այս ընչափաղց մարդը բաշխիշի համար է շտապում Զինէի մօտ, մեղք է, մանր երեխաների տէր է, —այսպէս էր մտածում Միրը։ Եւ Բաբօն գնաց։

Նրա արտաքին ճկուն և ուրախ ճկուրը, նրա զուարթ արտայայտութիւնը այնքան հեռու էին բռնազբօսիկ լինելուց, որ մարդ ակամայից հաւատում էր թէ այդ ծիծաղն ու բրդիջը հենց սրտի խորերից է բղխում։ Նա մանկութիւնից սովորել էր հաճոյակատար լինել Միրերի կամայականութեան։ Նրանց ուրախացնելու համար մի սիրային երգերել, բորբոքելու համար՝ մի դիւցազներգութիւն, ծիծաղելու համար՝ մի առակ, մի կատակ անել։ Աէկին անազ անել, քածիկ-փծիկ լինել, բոզ-լացիկ լինել. վերջապէս, շաղակրատ, խեղկատակ, ամեն ինչ նա էր։ Երեկոները ստրուկտառայի նման ծալապատիկ նստած Միրերի ոտների տակ, քնացնելու համար ոտների մատները շփելով, թմրեցնող պատմութիւններ էր անումն։

—Զինէ', —ասաց նա ծափահարելով, երբ Միրի տուն մտաւ —լէ, լէ, լէ, այսօր քո ծառայ Բաբըը իւր խաթունից մեծ բաշխիշ ստանալու ակնկալութիւն ունի։ Միր թափինը էգուց կամ միւս օր այստեղ կը լինի։ Վկամ դուռն է կամ երթիկ։ Մամօի թշուառ դրութիւնը Թափտինին ցոյց չտալու համար եղբօրիցդ շատ եմ խնդրել, և այս րոպէից Մամօն ազատ է։ Դուք ոչ թէ միայն իրրե նշանած, այլ իրրե օրինաւոր ամուսին պարտաւոր էր արժանավայել յարգանքով նրան հիւրասիրել։ Ծափեցէք զնդանից դուրս բերել, քանի անընկճելի առիւծը չէ եկել, թէ չէ ամենին բանն էլ վատ կը լինի։

Զինէն նորից պճնուեց, այդ հալ ու մաշ դրութեամբ

էլ սբանչելի էր նա։ Հուրի փէրիներն անգամ կը նախանձէին նրան։

Եւր բառասուն աղախիններով միասին զնդանի լեռշ պալը<sup>1)</sup> մէկ կողմ գլորեց։ Եւ նայելով զնդանի խորերը աչքերը լի արտասուբով, մելամաղձիկ կանացի քնքուշ ձայնով կանչեց։

— Մամէ՛, Մամէ՛, բեղ արձակելու եմ եկել։

Ներսից շատ նուազ, հազիւ լսելի մի ձայն՝ ինչպէս հեռաւոր անտառի խորքից հովուական սրնդի հոգեղմայլ սուլոց՝ խփուելով մերթ զնդանի մի կողին, մերթ միւսին անորոշ կերպով հասաւ Զինէի ականջին։

— Զէ, Զինէ, չես եկել ինձ արձակել զնդանից,

Այլ բաղրիկ հոգիս բաժնել իւր մարմարց։ —

Երբ Մամէի աչք Զինէին հանդիպեց,

Այնքան ծանր ախ սրտից արձակեց,

Որ թիկունքի մի ոսկը դուրս պրծաւ շարքից...։

Այդպէս էր մրմիջել իւր պաշտանների մէջ Մամօն, որ մի անգամ էլ նրան տեսնէ ու մեռնի։ Աչա սյդ էր պատճառը որ Բաքօն ցանկանում էր անպատճառ Զինը լինի Մամօն արձակողը։

— Երկու միմեանց սիրող սրտեր երկար բաժանումից յետոյ երբ յանկարծ մէկ մէկի հանդիպեն, — ասում էր ինքն իրան այդ անարդ մարդը, — սյնքան ծանր յեղափոխութիւն կը լինի նրանց հոգեկան աշխարհում, որ ուրախութիւնից կը սկսեն լաց լինել։ Կարելի է և կաթուածահար։ Եւ ի՞նչ ոյժ էր մացել Մամէի մէջ սյդ ուրախ և տեսուր բոպէնների ընդհարումներին դիմանալու։

Հետևեալ օրը դանդաղ բայլերով չորս մշակների թեկին չարդարի (չորս փայտ) վրայ կապուած անշուք մի դագաղ Զինէի բօշքից դէպի հանդիպակաց դարաստան էր յառաջանում, ետևից մի սկազգեստ կին, ծնկներ ու գլուխը ծեծելով ողբաձյն կանչում էր. «Վայ լը մըն Մամէ, վայ լը մըն բէ խոյի ու բէ խոտանօ Մամէ»։ (վայ ինձ Մամէ, վայ ինձ անտէր ու անտիրական Մամէ)։ Այդ կինը ինքը Զինէն էր. իսկ դագաղի մէջ դրուած էր ծերունի Ալփաշայի

1) Ապառաժ, ժայռ։

որդի Ալան Մամէն Բօրի ձիաւորը։ Նրան այդ դարաստանում Զինէի լուսամուտի հանդէպ մի անկիւնում ամփոփեցին և անշուր թափորը առւն դարձաւ։

Մի շաբաթից յետոյ, երբ Միր Զէյտինը իւր հաւատարիմ Խորհրդական Բաքօի հետ զբօսնելու էր գնացել, վերջինս Մամօի շիրմի վրայ մի սև բան նկատեց և մօտենալով տեսան, որ այդ սևաղեստ արարածը Զինէն էր։ Միրը ասեց։

— Ով Զինէ՛, Զինէ՛,

Սիրահարութիւնը գլխիդ ուշը թոցրել է։

Զգիրու մարդիկ այսօր մեզ կը մեղադրեն։

«Մամէի մահից վերջ նրան կը սիրէ Զինէն»։

Զին։ — Խնդրում եմ երկնքի հզօր Աստծուց,

Եղբայր, որ հօրըս այս բերդն ու ամրոց

Շանթահարէ։ Հանէ կրակ ու բոց

Լափէ, ինչպէս դէզ և կամ մի խոտի խուրձ։

Ով էր տեսել եօթ տարի

Մի մարդ շլթայուած

Կնաթող եղան։ —

Միր։ — Հաւատա ինձ ո՞վ Զին։

Թէ կարելի լինէր գընել Մամէին,

Կըռովս ոսկի կը գնահատէի իւր գին,

Կը վերադարձնէի կորուստ թանկագին։

Զինը գերեղմանից առւն դառնալով ասում է։

— Գնա, անցի՛ր, ո՞վ գիշեր, չեմ ուզում ես քուն,

Հողմախառն անձրև բարձրանայ անհուն։

Զուր հոսէ մտնի երկրի եօթ խաւերից

Որ Ալանի որդու պատմնըը թրչուի նրանից։

Ա՛ն Մամէ, բանի՛ անտէր ես, անպաշտպան,

Աղիողորմ կանչում եմ և Ձաբար»<sup>1)</sup> օգնական,

Մի տեղ պատրաստի այս դարաստանում,

Ուր վաղիւ լինիմ բեղ ընկեր անբաժան։

Հոդեկան ծանր յուզումը մի շաբաթուայ ընթացքում այնքան հաւ ու մաշ էր արել և այլանդակել այն հուրիփէրիին, որին շատ Միրերի որդիք բերանաբաց էին նայում,

<sup>1)</sup>) Կենդանարար. բժշ. Աստուած։

տեսնողը չեր կարող հաւատալ իւր աչքերին։ Նա զառանցանքի մէջ էր և հազիւ լսելի ձայնով ասում էր՝ Փէրի՛, Փէրի՛։ Խարա Թագտինին ասա, որ յիշէ մեր դառն մահը. իմ և Մամօի արեան վրէժխնդիր լինի։ Թաղեցէր ինձ իմ Մամօի կողքին, թիկունք թիկունքի. երկսայրի «նրանը»<sup>1)</sup> մեր մէջը դրած։ Եթէ մեր դիրքը՝ սովորական ննջեցեալների պէս անխախտ մնայ՝ տռփական էր մեր սէրը, և արժանի ենք այս պատուհասին։ Խոկ եթէ մեր երեամերը դէպի իրար շըջուին՝ մաքուր և անարատ «Սիրոյ զոհեր ենք մենք»<sup>2)</sup>։

Եկաւ Խարա Թագտինը այն ձագակորոյս առիւծի նըման, որի առջևից անգութ որսկանը յափշտակում է նրա կորիւնները։ Մռնչեց, գոռաց, գլխի մազերը փետեց, երկու հաստ հիւսակներ արմատից կտրեց, ոտքերը յաճախ գետնին դոփելով՝ ուր է իմ ձեռնեղբայր Մամէն, ուր է իմ ձեռնաբըր նազելի բենիս։

— Հիւանդ են, շատ հիւանդ. պատասխանեց Փէրին։

— Ո՛չ, Փէրի, ձշմարիտ խօսեցէր, թէ չէ «զիկֆի խարը»<sup>3)</sup> շողաց։

— Անվեհեր առիւծ, ինչի՞ էր սպանում. ինձ, առէ՛ք բաշեցէր ձեր գլխին այս սև սփածաննելիքը, ինձ տուէր իմ Մամէի Զիկֆի խարը, որ նրանով թափեմ քսու, անարդ բարօի սիրտը, թափեմ նրա ժանտահոտ արիւնը, որ զովանայ սիրտս։ Ինչի՞ էր ինձ հարցնում Մամօ. Զինին, գնացէք մեր դարաստանը, այնտեղ կը տեսնէք այդ «սիրոյ զոհերի» անշուք դամբարանը։

1) Խանջար։ 2) Մահմետականի կարծիքով անարատ սիրոյ զոհերը թէ գերեզմանում և թէ հանգերձեալ աշխարհում կը հասնեն իրանց բաղձանքին. մինչև անդամ ամեն հաւատացեալ «ըլլ հուրիւների կարժանանայ։ Այս հաւատքի հիման վրայ առհասարակ թէ մահմետական աշուղ, թէ բուրդ «դանդ բէժ» սիրային յարաբերութեան ժամանակ կուսութիւնը անարատ պահող հերօսներին մուրատի չի հասցնում այս աշխարհում։ 3) Առասպեկեալ թուրի անուն է, որ բանականի պէս կարող է խօսել նեղ ժամանակում։

Երեկոյ էր: Միր Զէյտինը և Բաքօն փախել էին ամբողը և այնտեղ ապաստանել: Խարա Թաժտինը քալդական կարեճ երկու եղբայրներով արշաւեցին ամրոցի վրայ: Առաջինն ինչպէս առիւծ մոնչաց, թափ տուեց զիլֆի խարը բերդի բարերին, բայց ափսո՞ս, այնքան արիւն էր թափել, որ բթացել էր նրա բերանը: Վեր առաւ իւր ծանր գուրզը և այնպէս հարուածեց որ

Սարեր ձորեր թունդ եկան,  
Դաշտեր բլուրներ ձեղքուեցան,  
Շատ մարդիկ խելադարուեցան:

Այդ գիշեր երեք եղբայրները լաց ու կոծով անցկացրին մինչև առաւօտ, լուսածագին երկու պյանդակ հրեշներ սպիտակ կտաւների մէջ փաթաթուած օձի նման գալարուել էին թաժտինի ոտքերի տակ: Այդ ստորաքարշ մարդիկ Միր Զէյտինը և Բաքօ աւան էին, որոնք մի վերջին փորձ էլ արին շիջուցանելու այն կատաղի հրդեհը, որ սկսուել էր արդէն լայն ծաւալ ստանալ թաժտինի սըրտառում:

— Ո՞չ, Միր, ասաց Թաժտինը անակնկալ գլուխը անկողնի տակից բարձրացնելով: Սխալում էր ինձ երեխայ կարծելով. դաւաճանութեամբ ինձ պատերազմ էիր զրկում, ձեռնեղբօրս և բէնուս հարսանիքն էիր խոստանում, պյդյուսով եօթը երկար տարիներ եղբայրներիս հետ արեան մէջ լող տալով հազարաւոր բաջերի արիւն ենք թափել, հարիւրներից վէրք ստացել: Այդ գառն տառապանքների և անձնազոյնութեան վարձատրութիւնը այս պէտք է լինէր ձեր կողմից. այսպէս պէտք է կատարէիր Մամօ Զինի հարսանիքը:

Ես իմ անոյշ ձեռնաբոյր Զինէից մի կտակ ունիմ (և բացադրեց կտակի բովանդակութիւնը): Գնանք ուրեմն և այս ստոր արարածի հետ բանանք շիրիմը և տեսնենք: — Նրանք գնացին:

Լուսաւոր հրեշտակները սիրոյ զոհերից պատանքները մինչև գօտէկապ քանդելով՝ շինել էին մի անջրպետ, երկուայրի գործիքը զետեղուած էր երկուսի մէջ տեղ: Երկուսի դէմքերիցն էլ պառւղ պտուղ բրտինք գլորուելով ձևացրել էր շատ նուրբ, թափանցիկ շոգի, ճակատ ճակտի, բիթ քթի.

երեսները միմեանց շուռ տուած բաղցը գրկախառնութեամբ  
փաթաթուել էին մէկ մէկու. զմայլելի, միանդամայն մղկը-  
տեցնող էր տեսարանը:

—Տօ, անարդ շուն, անգութ գաղան, լաւ նսՍիր պյդ  
քո զոհերին, որոտաց թաժտինը:

Մինչդեռ Բաքօն վիզը երկարելով դեպի գերեզման՝  
արտասանում էր, —ո՞հ ես այս օրինակ անպարկեցտ նըն.  
ջեցեալներ չեմ տեսել, —զելֆի ևարը միայն մէկ անգամ  
շողաց՝ Բաքօի գլուխը ֆոռաց՝ մարմնից շատ հեռու գլոր-  
ուեցաւ, որից մի կաթիլ սև արիւն ցայտեց երկու ուխտեալ  
դաշնակիցների մէջ:

Մի բանի օրից յետոյ խնամբով ծածկուած հողակյտից  
երեք բոյս ծլեցին, նոցանից երկուսը անմահական տունկ էին  
Բալասանի, հոտաւէտ վարդենոււ Խսկ երկուսի միջինը ժան-  
տահոգի մարդու մի կաթիլ արիւնից ծլած՝ դժնի փուշ էր,  
ծաղիկների կոկոները բացուել փաթաթուել էին պյդ փշին.  
քանի բարձրանում էին իրար փաթաթուել՝ փուշն առաւել  
բարձրանում էր, յաւիտենական անլոպետ ձեւացնելով:

Եթէ փուշն արմատախիլ անէին՝ վարդերն էլ կը թա-  
ռամէին, որոնց սիրուն ամեն անցորդի պարտքն է փշի ծայրը  
խնամբով ու զգուշութեամբ կտրել, որ վարդերն իրար  
պլլուին. բայց աւազ դանի կան վարդեր՝ կապրի և նը-  
րանց բաժանող դժնի փուշը:

ՄԱՂԱԹԻԷԼ

